

ՄԱՐԻԲԱՍԵԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ

ԸՍՏ Մ. ԽՈՐԵՆԱՅԻՈՅ

(Տէս Հտ. ԽԱ. 42, 111, 224, 308, ԽԲ. 35):

ԳԼՈՒԽ Ե

Պատճառք Մ. Խորենացոյ նմանկոչ Ծննդոց Գրոց ազգաբանութեան. — Ստուգութիւն Հնգաւմատենին և անոր պատմական արժեքն. — Եզրակացութիւն. — Հայկ և անոր ժաղումն. — Դժուարութիւնք. — Լուծումն. — Հայկ՝ նախահայր Հայոց:

Թէ ինչ պատճառաւ արդեօք Մարիբասեան պատմութիւնն Ս. Գրոց ոճոյն և քրիստոնէական երկատիրութեան կերպարանք մ'առած է, և որո՞նք են այդ պատճառներն՝ եթէ հարցուի, կ'ըսենք հաւանօրէն, թէ նախ, Մ. Խորենացին՝ ինչպէս նաև մեր թուականին մէջ ազրող ամէն ուրիշ ոչ միայն եկեղեցական, այլ և աշխարհական մատենագիրք՝ շատ յունասէր ըլլալուն պատճառաւ և ատեցող հեթանոսութեան, ջանացեր են վերջիններէն և անոնց մատենագրական ոճէն խորշիլ և առաջիններուն մատենալ: Երկրորդ, Յովսէպօսէն և Իսաբրիտէն՝ ամենէն աւելի օգտուած և անոնց ուղած է հետևիլ Խորենացի, որոնք Հրէից պատմութիւնը խառն ուրիշ ազգաց հետ գրելով, ջանացեր են Ծննդոց Գրոց ոճը բռնել և բոլոր քաղղէացի մատենագիրներն անոր հետ համաձայնեցընել: Երրորդ, թերևս գլխաւոր նպատակ Խորենացոյն եղած է՝ խորշեցընել ըստ կարելոյն՝

1 Յերուի Հրէից գրոց պատմութիւնն ՚ի ըսկըբանէ միջակէտ հաստատութեան և ազրիւր եկած է Հնգկաց, Քաղղէսկաց, Սինէսկաց, Արեաց և ամենայն սեմական ազգաց առասպելայօք աւանդութեանց, որոնց թէպէտ

՚ի Պարսից զհամազգիս իւր, որոնք այն ժամանակները զիտենք թէ ինչ աստիճան մեծ սէր և ձկտմունք կը ցուցընէին առ Արեաց ազգն, զոր մանրամասն և բացայայտ պատճառներով կ'ապացուցանեն մեզի քաղցրախօս Եղիշէի և Ղաղարայ Փարպեցւոյ ստուգապատում երկատիրութիւնքն: Զորրորդ, Խորենացին տեսնելով թէ իրմէ առջի բոլոր հեթանոս և քրիստոնեայ մատենագիրք, ինչպէս նաև այժմեանք՝ զորս յետոյ պիտի տեսնենք, թորգոմացիք կամ որդիք թորգոմայ անուամբ՝ Հայաստանի ժողովուրդը կամ լաւ եւ՝ զՀայս կ'իմանային, անոր համար հարկ էր՝ որ ելլէր մինչև անոր նախահայրը թորգոմ, որուն անմիջական որդի է Հայկ. իսկ զթորգոմ Ծննդոց Գրոց ազգաբանութեան մէջ միայն կարելի էր գտնել:

Այժմ տեսնենք թէ այս ոճը բռնելով Մ. Խորենացին՝ աղէկ ըրած է թէ ոչ, ըստ ինքեան մտածելով այն գործոյն հաստատութիւնն՝ աղէկ ըսելու ենք անուշտ: Վասն զի ՚ի բաց լսողով նախ Ծննդոց Գրոց աստուածային և անոխալ վկայութիւնը, որ ամէն վկայութեանէ զօրաւոր է, և միայն նկատելով զայն մարդկային աւանդութեանց վերոյ հիմնեալ և անընդհատ կիրառութեամբ մինչև առ մեզ հասած՝ իբրև հնագոյն պատմութիւն մը, կատարելագոյն¹ է նա քան զամենայն պատմու-

և խորը նայելով՝ ունին ասկէ հանուած շատ ճշմարիտ տարրեր, բայց այնչափ այլակերպուած են տրեւեման ապականալ և երևակայութեամբ լի առասպելներով և վիպասանութեամբ, որ եթէ Հրէից կամ Մովսիսի Հնգա-

թիւնս հին ազգաց, ըստ վկայութեան բազմաթիւ բանասիրաց, Որովհետեւ նոյնանոր գտնուած պատմական, աշխարհագրական, լեզուաբանական և հնադատական հաւաստիք, օրէ օր կը ցուցնեն անոր ժամանակագրութեան ազգաբանութեանց և հնութեան ստուգութիւնը: Անշուշտ ինչպէս արդի ողջամիտ բանասիրաց, նոյնպէս ևս Մ. Խորենացւոյն անոր նմանելու շարժառիթն՝ այս եղած է:

Աւելորդ տեղ և նորասիրութեամբ իմն Մ. Գարագաշեան և այլք ոմանք կը մեղադրեն զՄ. Խորենացի՝ իրիկ տգէտ որ և դիւրահաւան, որ ինչպէս ուրիշ ազգաց՝ այսպէս Հայոց ցեղական և տեղական և լեզուաբանական բաժանումն, և երկրիս զանազան կողմերը տարածուին՝ յետ աշտարակաշինութեան և 'ի Հայկազ կը համարի, իւր ընդոծիններով 'ի Հայաստան գաղթեցընելով զնա, մինչդեռ իրք լեզուագիտական և երկրաբանական հաւաստիքընդ հակառակն կը ցուցնեն, կ'ըսէ նա. մարդկային ցեղից ք ժողովրդոց այն զանազան կերպ բաժանումները Ծննդոց Գրոց և Խորենացւոյ նշանակեալ գէպքէն շատ յառաջ էին:

Բայց մենք առանց ուզելու պէտք չեղած ժամանակ Խորենացւոյ ներքողեանն ընել, այլ պարզապէս ճշմարտութեան արբանեկելով կ'ըսենք թէ յայտնապէս սխալ կարծիք է այդ և ընդունայն դատումն. վասն զի այսպիսի կարծեցեալ տգիտութեան հետքն անգամ չէ կարող նկատուի 'ի Մ. Խորենացի՝ անոր երկասիրութեան հմուտ

եղող մը: Եւ ոչ իսկ Ծննդոց Գիրքն՝ որ ստուգապատում մ'աղբիւր ըսուեցաւ ուրիշ ամենայն հին աւանդութեանց, կրնայ վերցնել զայն. այլ կ'ենթադրենք թէ պարսաւադէտ հեղինակին լուսաւորեալ և անձնական գիտութիւն մին ըլլալու է այս: Ուստի առ այս մենք կը լռենք, և կը թողունք այն ամբաստանեալներուն, այսինքն Խորենացւոյն և Հնդամատենին գրին, որ իրենք զիրենք ջատագովեն իրենց խօսքերովն:

Յիրաւի, բազմահմուտ Խորենացի (Ա. Գլ. ԺԲ. էջ 63) իւր ձայնը բարձրացուցած այսպէս կ'ըսէ, առնելով անշուշտ 'ի Մար իրասայ. « Բայց պահանջի իմն ասէ պատմագիրն (Մարիրաս), թէ 'ի յոյով տեղիս գտան քնակեալ 'ի մարդկանէ յերկրիս մերում ցան ու ցիր սակաւք յառաջ քան զգալուստ քնկիւն մերոյ նախնւոյն Հայկա » . և այլուր (Ա. Գլ. Ժ) թէ « Հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ (Հարք) առ երկայնանստի միով լերամբ՝ բնակեալ յիշին յառաջագոյն արք սակաւք՝ ինքնակամ հնազանդել գիւցաղինն » . իսկ միւս Մովսէս՝ Գրիչ Հնդամատենին՝ այսպէս կը խօսի (Ծննդ. Գլ. ԺԱ.) . « Եւ էր ամենայն երկիր լեզու մի և բարբառ մի ամենեցուն . և եղև 'ի խաղալ նոցա յարևելից՝ գտին դաշտ մի յերկրին Սենաար և քնակեցան անդ, Եւ ասեն . եկայք յինեացուք մեզ աշտարակ.... Եւ էլ Տէր.... և ասէ . եկայք ինչուք և խառնակեսցուք անդ զլեզու նոցա.... և սիռեաց զնոսա Տէր Աստուած անտի ընդ ամենայն երեսս երկրի » . Ուրեմն Մարիրասեան պատմութեան

մատենը գիպուածով անյայտացած ըլլային՝ մինչև ցայժմ հին ազգաց և անիշխանակ ժամանակներու պատմութիւնքն ամենաստուգիաւարի մը մէջ պիտի մնային: Նոյն իսկ Ս. Գրիպուցւոց, Ասորեստանեայց և Բաբելացւոց սեպագն արձանագրութեանց աւանդութիւններն և առնալքը Մ. Գրոց օգնութեամբ յաւելոցանք ստուգել արդի բանասէրք:

Այսպէս ուրեմն Ուրնան և ամենայն հնութեանց պարապող բանասէրք, փոխանակ զէնքերին անոր գէմ գործընելու պարտին երախտապարտ հոգւով լեռումանի հետ՝ անոր շնորհակալ ըլլալ: Վասն զի եթէ Ծննդոց Գրքին հե-

ղինակն մարդկային ազգի զանազան ցեղից ազգաբանութիւնն և բնական դիրքը նկարած չլըլար, իրենք և ոչ իսկ մէկ քայլ պիտի կարենային ստուգ կերպով և անվախ յառաջել լեզուագիտական ասպարիզին մէջ. ինչպէս օրինակ իմն բռնաց, այսպէս նաև ժողովրդոց ներքին և արտաքին յասկութիւններն իմանալու համար՝ անհրաժեշտ կարևոր է գէթ ստուգ կերպով դիտնալ անոց ինչ բունէ յառաջ եկած ըլլան և ինչ հողք մէջ մնալին նախնաբար և Հնդամատեանն միայն կու տայ մեզ ամենայն ժողովրդոց ազգաբանութիւնն և բնակութեան տեղք:

հաւաքողն և կամ հաւաքմամբ ճոխացընողն իբրև ճշմարտասէր ոք՝ անկէ յառաջ չէր կրնար Հայոց ազգին և աւոր նախահօր ստուգապատում պատմութիւնն սկսիլ, եթէ իրօք համարինք թէ կային քաղղէական աւանդութիւնք, ուսկից որ սկսան յննդոց Գիրքն, և իւրիք քաղղէական մատենագիրքը:

ՁՀայկ՝ Հայ ազգին նախահայր դնելէն որչափ որ դժուար և անստոյգ բան չկայ, նոյնպէս՝ կ'ըսենք առանց կողմնակցութեան, տնկէ ալ բանաւոր և հաւանական բան չէր կրնար ենթադրուիլ, թէ ըլլայ յննդոց Գրոց և թէ մարդկային ազգի առաջին հանդամանաց հմուտ և ժամանակաւ մերձաւոր եղողաց (քաղղէարէն աղբերաց), ինչպէս նաև վերջի դարերու պատմագրի մը համար: Ուստի ընդունայն և յուսահատ ճիշդն է ջննալ բռնադատ մեկ նախնութեամբ սուտ և անկարելի ցուցընել Մարիբառեան կամ Մ. Խոռենացոյ աւանդած Հայոց ազգաբանութիւնն և նախահօր գոյութիւնն, մինչդեռ ստիպեալ ենք ուրիշ նախահայր մը անոր տեղ ստեղծել. և ինչ օգուտ՝ եթէ ժամանակաւ յետոյ իսկ համարելու ըլլանք զայն, մինչդեռ Հայկէն աւելի անժանօթ և անսովոր մէկն պիտի ըլլայ այն, Մանաւանդ թէ ասկէ աւելի ինչ խորշիկ, անհիմն և ծաղրական բան կրնայ ըլլալ՝ քան շիջուցանել զամենայն աղբիւրս պատմաբանական ընտոյ, հիմն ի վեր տապալել այնպիսի շքեղ յօրինուածութիւն մի, և ապա անդնդային խառնակութեանց և մթութեան մէջ՝ նոր նախահայր մը փնտռել Հայոց, նոր լոյս՝ մեր ազգային անյիշատակ ժամանակի պատմութեան. մինչդեռ ասոցին լուսաւորներ կը փայլին, եթէ տոհմային և եթէ քաղղէացի և երբայական պատմութեան հորիզոններուն վրայ և էջերուն մէջ, և Հայաստան անոնց լուսովը յերկայն ընթացս դարուց կը զուարճանայ և կը յառաջադիմէ՝ գոգոցն անընդհատ յաջորդութեամբ՝ ի մի հարստութենէ ցմիւս հարստութիւն իւր քաղաքային և պե-

տական իշխանութեան մէջ. և այժմ իսկ իւր անցելոյն յիշատակօք միայն կը սնանի և յանուն Հայկայ՝ Հայ կը համարուի մեր ազգն: Այսպիսի անխոհեմ փորձ մը փորձելն ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ Սամանի պէս՝ թշնամոյն փրատակացը տակ կենալ ու թաղուելէն վերջ, ուզել դարձեալ նոր կեանք շնչել և նորանոր արութեանց հանդէսներ ընծալ յեւ. բայց ի գուր:

Ուրեմն այս յայտնի է թէ ոչ պատմաբանօրէն և ոչ իսկ առանց անտեղութեան՝ կրնայ մէկն մեր ազգին և նախահօր ծագումը գէպ ի վայր իշխուցանել յետ մերժելոյ զՀայկ՝ Այլ եթէ մէկ պատմական և հաստատուն միջոց կայ՝ այն է անդրազոյն ևս ի վեր ելլել մինչև ցթորգոմ, որուն անմիջական յաջորդ կը համարուի նա: Վասն զի այս միակ կէտը միայն մենք լուսաւոր կը նկատենք՝ եթէ տոհմային և եթէ Ս. Գրոց պատմութեան մէջ, թէ Ասորեստանացի սեպան արձանագրութեանց մէջ, և թէ եդիպտական յիշատակաբանաց վրայ, զորս կ'ընթեռնուն բանասէրք: Սոյն այս կէտն կարող է, կարծեմ, վերջապէս լուսաւորուելով ևս քան զիս՝ օր մը փարատել իսպառ Հայոց պատմութեան խորհրդական ըստուերներն և մթութիւնը: Արդարև Հրէից մատենքն յննդոց Գրքէն սկըսեալ՝ կը ցուցընեն մեզի Արարատայ բնակչաց իբրև նախահայր զթոգ-արմա (թորգոմ՝ ըստ հայերէն թարգմանութեան), զոր և դարերէ վերջ եկող Հրէից միւս գրաւոր աւանդութիւնքն առանց լռելու կը հաստատեն, նոյն իսկ մեր հայրենի աշխարհն իւր աշխարհադրական գրիւքն և զանազան յատկութեամբ նկարագրած ժամանակ:

Այսպէս ուրեմն յուշի ունելով այս կարևոր կէտը, դառնանք քննելու Հայկոյ ծագումը, տեսնենք արդեօք խորենացիէն յառաջ Հայք կը ճանչնային զՀայկ իրանցընէ իբրև իրենց նախահայր, և թէ արտաքին պատմագրութիւնն ինչ աստիճան հին կը համարի մեր աշխարհն և ազգը, ինչ տեղեկու-

թիւններ կու տայ անոնց վրայ, և թէ այս տուած տեղեկութիւնքն ինչպէս կ'ընթանան Մ. Խորենացոյ պատմութեան հետ:

Մովսէս Խորենացին, ըստ մարիբաւտան պատմութեան (Ա. ԳԼ. ԺԱ. էջ 60, և այլուր) իրուցընէ առաջին եղաւ որ ուղեց պատմաբանական երկաւ սիրութեամբ զՀայկ' մեր ազգին նախաճայր տնուանել, և անկէ մեր ազգին և աշխարհի Հայք կամ Հայաստան աշուանքը յառաջ բերել, և թէ անկէ յառաջ ոչ որ այնպէս համարեցաւ, կ'ըսեն ոմանք: Եւ իրաւցընէ, արտաքին ձկն նայելով՝ ըստ իմիք ստոյգ է այս. սակայն մէկ մ'անոր ներքին էութեան վրայ ձգենք հայեալքնիս, և կը տեսնենք թէ իրօք այնպէս եղած չէ, և թէ պարզապէս և յախուռն ենթադրութիւն մի է այս՝ հակառակ պատմութեան, և ոչ աւելի ինչ:

Առ այս առնուիք դիմացնիս Խորենացիէն դար ու կէս յառաջ տոհմային մատենագիրները, և տեսնենք թէ ինչ կ'ըսեն: — Ագաթանգեղոս Տրդատայ վրայ խօսած ժամանակ՝ այսպէս կ'ըսէ. « Սյայորեն հսոյկաբար զուլթ արձանսն 'ի վերայ իւրոց թիկանց ստանձնեալ բերէր »: Եւ 'ի հայերէն թարգմանութեան Մ. Գրոց, (Յովբ. ԼԷ. 31: Ես. ԺԳ. 10) « Խելամուտ իցին կարգի բազմաստեղաց, և քորացեալ իցէ զպատուակ Հայկին. — « Աստեղք երկնից Հայկին հանդերձ և ամենայն զարդոք երկնից՝ լոյս մի տացն »: Արդ զանց ընելով ուրիշ անուղղակի և ակնարկութեամբ միայն եղած շատ օրինակներ՝ կը հարցընենք. միթէ ասոնք բուականէն աւելի չեն ապացուցաներ թէ Հայկոյ գէթ անունն ոչ նոր ինչ էր, այլ ամենահին ժամանակէ և աւանդութեամբ եկած՝ ամենուն ծանօթ, սիրելի և գիւցազնական անուն մ'էր, ինչպէս կը վկայեն նաև Խորենացոյ այս խօսքերն, որ (Ա. ԳԼ. Ժ.) յետ 'ի մէջ բերելոյ զՀայկ և զպատմութիւն նորա և զինութիւնս՝ կ'ըսէ. « Արդաւացուցանէ և այս զառացեալ զորոցս

աւելիրս », այսինքն թէ հնոյն Հայաստանի անդիր կամ Ժողովրդական զրուցաց մէջն իսկ այնպէս կը ներկայանար Հայկ և զուցէ ամենուն քաջամնօթ էր:

Թերևս ըլլան ոմանք, ինչպէս եղան Մ. Գարաղաշեան և այլք, որ ըսեն թէ այդ վերոյիշեալ հեղինակաց վկայութիւնքն ոչ թէ մեր ազգի նախաճայր, այլ իբրև հսկայ կամ աղեղնաւոր մը կ'ուզեն ցուցընել զՀայկ, Յունաց Ռորինի նման Այս ենթադրութիւնն թէ պէտ և մտաւորական գեղեցիկ գիւտ մ'է, բայց երակացուցիչ չէ: Յետագայ կէտերու ստոյգ քննադատութիւնն՝ բացէ 'ի բաց կը մերժէ զայն: Նախ և առաջ 'ի սկզբանէ Հայ ազգն չէր կրնար զՀայկ իբրև առասպելեալ հրակոյ մը կամ պարզապէս անէակ գիւցազնի անձնաւորութիւն մը ճանցած ըլլալ, առանց անոր մէկ գիւցաղնական վիպասանութիւն մը յօրինելու, ինչպէս ըրին Յոյք օրինակ իմն, կուեսեցընելով զնա (զՈրինն) ընդ Արտեմիայ. և Հայք երգեցին զերկնէ երկին և երկիր զվահագնէ, և Պարօիք կ'ըսէին Ռոստոմոյ Սազճկի համար՝ թէ 120 փոյի ոյժ ունէր: Այլ ընդ հակառակն մենք բաց 'ի Բելայ պատերազմն՝ որ պատմական դէպք է, զոր կը պատմէ Մ. Խորենացի աւելով 'ի Մարիբասայ և 'ի պատմական աղբերաց կամ 'ի ժողովրդական երգոց, ուրիշ մասնաւոր դէպք մը կամ առասպել մը չենք գտնար Հայաստանի ժողովրդոց մէջ և ոչ իսկ մեր նախնեաց մատենագիրներէն յիշուած: Ուստի այս երկու բանաւոր ենթադրութեանց միջ պէտք է ընդունիլ, այսինքն թէ կամ մարիբաւտան պատմութեան այն վերը յիշած դէպքէն, զոր մեզ կ'աւանդէ Խորենացի, ունեցած է մեր ազնի Հայկոյ վրայ հոգեկայի կամ քաջ աղեղնաւոր գաղափարը, որով կը հաստատուի թէ ուրեմն Մարիբասայ երկասիրութիւնն հին ժամանակի տիպ ունի և ստուգապատու՝ պատմութիւն մ'է, (վասն զի, ինչպէս տեսնուեցաւ կանխաւ, Հայք Մ. Խորենացիէն դարերով առաջ կը

ճանչնային զՀայկ) . և կամ ըսել թէ բնաւ աղբի մը պատմութեան մէջ մինչև հիմայ վերպասաճական կամ առասպելեալ անձ մը տեսնուած է, որ շունչնայ իւր յատուկ և առասպելախառն վերպասանութիւնը կամ դէպք մը . վասն զի այս բնագործմէ՝ որ կը զանազանէ առասպելը աճնձն ի պատմականէն . եթէ համարինք թէ Մար Աբաս չաւ յաստանի աւանդութենէ մ'առած է զայն , և ոչ թէ Հայք ՚ի Մար Աբասայ , ասով լաւ ևս կը հաստատուի թէ որովհետև Մար Աբաս զՀայկ Հայոց նախաճայր կը համարի , ուրեմն նշան է թէ Հայ ժողովրդեան աւանդութիւնն իսկ այն եղած էր հնուց ՚ի վեր , իսկ որովհետև մենք կը տեսնենք թէ Հայք ծանցեալ են միշտ զՀայկ՝ առանց անոր մէկ ուրիշ առասպելի մը , որ օտար ըլլայ մարիբասեան աւանդութենէն , ուրեմն յայտնի ապացոյց մ'է այս՝ թէ Հայք իսկզբանէ իրենց նախահայր կը ճանչնային զՀայկ . Ի՞նչ կերպով արդեօք : — Կը պատասխանենք նախ՝ թէ կենդանի և անընդհատ աւանդութեամբ : Քան զայս աւելի՝ պատմական հաւաստիքէ մը , որ աներկբայելի կ'ընէ մեր կարծիքը թէ Հայք՝ որդւոց որդի իրենց բուն նախահայր ընդունած են զՀայկ . այս է , վերոյիշեալ տոհմային մատենագիրներէն կ'իմանանք թէ Հայք՝ Հայ վերագործ միայն յառանկն իրենց և իրենց աշխարհին վրայ կրած են , այսինքն յանուն Հայկայ՝ Հայք , և աշխարհն ալ Հայաստան՝ կոչած են : Այսպէս Զենոք Գլալ (՚ի չորրորդումը գալու) կեսարիոյ Հայրապետէն առ Ս . Գրիգոր Լուսաւորիչ ուղղած նամակի մը մէջ (երես 31) այսպէս կ'ըսէ . « Սրբազան և աստուածարեալ և փառաւորեալ հայրապետիդ Հայոց մեծաց » , Նոյնը դարձեալ (երես 13) առ Ս . Գրիգոր ուղղեալ կեսարու հայրապետին նամակին մէջ կ'ըսէ . « թէ ոչ անսես

արար Աստուած զազգոյ Հայկազունեան » , Ագաթանգեղոս (ժե .) կ'ըսէ . « Քանզի յԱրարտեան գաւառին ՚ի թագաւորանիստ կայանսն բղխեցին Հայոց տանն թորգումայ շնորհք քարոզութեան աւետարանին » . « Այս իշխանք են ընտիրք » ՚ի մէջ Հայաստան աշխարհի տանն թորգումայ » (Սնդ ձժի) : « Ընթերցեալ գթորգումեան ազգիս , զՀայաստան աշխարհիս զաստուածապարզ և աւետեաց աւետարանին քարոզելոյ » (Սնդ յառաջն) . « Մատենաք յիշեցուցիչք պատմութեան Հայաստան աշխարհի որդոց թորգումայ » (Ագթ . ձի .) : « Զիւր վիճակն զՀայաստան երկիրն պայծառացուցեալ զամենայն աւուրս կենաց իւրոց լուսաւորեալ » : Բուզանդացին փաստոս (Գ . Գլ . Բ) կ'ըսէ . « Նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւն թագաւորութեան Հայաստան երկրին » . « Վասակ իւրով Հայաստան (հայ , հայկազեան) գնդաւն հարկանէր զզօրսն Պարսից » (Սնդ . Գ . Գլ . Լի .) . « Սգային զնրաւս ծագէ ՚ի ծագ ամենայն սահմանք երկրին Հայոց , հայ լեզուն առհասարակ » (Սնդ . Ե . Լ .) : Աւստի մինչև հիմայ բերուած վկայութեանց մէջ ոչ զնեով Բուզանդայ Հայաստան (Հայկազեան) զնդաւնկարապրած վասակայ յաղթութեան և հայ լեզուն բառերուն , և Զենոք Գլալայ Հայոց համար ըսածն « Զազգոյ Հայկազունեան » , կը զարմանալ թորեմնացոյ հակառակորդաց , և ՚ի մասնաւորի Մ . Գարագալեանի ըրած այս քըննադատութեան վրայ , թէ թորեմնացիէն յառաջ՝ մեր ազգն և լեզուն յանուն Հայկայ՝ Հայկական կամ Հայկազեան կոչուած չէ , թերևս կարենայ արդարացընել իրզգիւնքը հմուտ հեղինակն այս պատմական վկայութեանց առջև , եթէ առաջուց ապացուցած ըլլար թէ անոնք իրզը չորրորդ դարու մատենագիրներ չեն . սակայն առանց այս բաներո ըսե-

1 Անտոգի է այն կարծիքն , զոր կը պաշտպանեն ոմանք ընդ Պ . Տիւրքոյայ թէ Հայկ և Հայք՝ Հայաստանէն ծագած են , և ոչ թէ Հայաստանն ՚ի Հայկայ : Ասոր հակառակ կ'ենլին ոչ միայն

ընդհանուր մեր աղբի աւանդութիւնք , այլ նոյն իսկ Հայաստան բառին վերլուծումն , զոր պիտի տեսնենք յետոյ :

չու, կ'ուզէ այն պատմական լուսոյն և ակն յայտնի հաւաստեաց դէմ կռուիլ:

Բայց թողո՞ղ ասոնց նման շատ ուրիշ հնաւանդ վկայութիւններ, խօսքեր և այսպէս կ'ուզենք եզրակացնենք կամ այն է թէ Հայկին՝ Հայ և Հայաւստան բառերէն ծագած է, և կամ ընդհակառակն այս վերջիններն՝ Հայկայ անուանէն. վասն զի երկուքէն մէկուն գոյութիւնն՝ անհրաժեշտ կարևոր է, և միտ եղած. չէ մարթ բացասել:

Դնենք թէ վերջին երկազրութիւնն ճշմարիտ ըլլայ. առ այս կը հարցնենք. ինչ նշանակութիւն ունի ինչ բառն, ուսկից յառաջ եկած է, և ինչ անձի և ժամանակի կը վերաբերի: Այս հարցման ոչ որ կրնայ պատասխանել. հակառակորդք մարիբաւան պատմութեան ապի 'ի բերան եղած՝ չեն գիտեր արդեօք դէպ 'ի վեր ելլելու է, եթէ դէպ 'ի վար՝ տոհմային պատմութեան մէջ, այսպիսի միայն կրնան արտաբերել. ո՞վ գիտէ իսկ արտաքին պատմութիւնն բոլորովին կը լռէ. որովհետեւ արտաքինը զմեզ Արմէիք և աշխարհն ալ Արմէնիա կը կոչեն, որոնք Հայ և Հայաւստանն հնչմանց հետ բնաւ նմանաձայնութիւն չունին:

Թերեւս ըսուի թէ Արարատեան ժողովուրդք կամ տուն Թուրքումայ՝ հնաւրած ըլլան այս Հայ և կամ Հայկ անուներ, բայց թէ ինչ պատճառաւ՝ անյայտ է: Արդ ո՞վ չի տեսներ թէ ասկէ ալ անտեղի և ծագական ենթադրութիւն չի կրնար ըլլալ. վասն զի բնաւ մէկ ազգի մը և պատմութեան մէջ տեսնուած և լուծած բան չէ՝ թէ ամէնքն միաբանած՝ անէակ, առանց իր մը ներկայացնող և ընդօրս անուն մը հնարած ըլլան, և այս անունն անջնջելի մնալով այն ժողովուրդեան պատմութեան, կենդանի աւանդութեանց, յիշատակարանն, աշխարհին, ազգին, և մինչև անգամ անոր մոլորին և սրտին մէջ՝ այնպէս շարունակուած ըլլայ դարուց 'ի դարս: Բաւական չէ հակառակասիրութեան ոգւով պնդել թէ Հայկ՝ Հայ բառին նուազականն է, ենթադրելով թէ ինչ-

պէս ակ և իկ՝ այսպէս նաև ամենայն կ'վերջացող բառերն նուազական են: Այս ևս սխալ է, և տոհմային մատենագրութեան մէջ գրեթէ բնաւ չտեսնուած բան, թէպէտ և ուրիշ ազգաց մէջ ըլլայ գործածուած: Ենթադրելով թէ այսպէս եղած ըլլայ, ո՞վ չի տեսներ անկէ ծագած լեզուաբանական և քերականական կանոնի դէմ անտեղութիւնն: Վասն զի եթէ իրօք Հայկ՝ Հայ բառին նուազականն էր, ինչպէս Հայկական ևս՝ Հայկին, այն ժամանակ կ'ունենանք երկու նուազականէ ձեւացած անուն մը, իբրև թէ նախ սերունդ մը կամ ժողովուրդ մը՝ Հայ բառին վրայ կ'մասնինկն աւելցնելով՝ անցեր գացեր է, բայց յետոյ ուրիշ մը անոր տեղն յաջորդելով՝ Հայկայ յաջորդներէ մէկուն, կամ զուցէ թէ նոյն իսկ Հայկայ վրայ աւելցուցեր է ուրիշ նուազական մ'ալ ակ, որով եղած է Հայկական, թող որ այս ենթադրութեամբ խնդիրն բնաւ լուծուած չի համարուի, մասնաւորութէ աւելի ևս կ'նճռուած, և Հայ բառին նշանակութիւնն և կիրառութիւնն կը մնայ տակաւին անծանօթ: Վասն զի եթէ 'ի քաղղէական աւանդութեանց հասած են այն անուանքն առ մեզ, տարակուսական կ'ըլլայ այդ նուազեցուցիչ անուանց ենթադրութիւնն. իսկ եթէ յետոյ տոհմային մեր թարգմանիչք և 'ի մասնաւորի խորենացին՝ այն ժամանակ բոլորովին անկարելի է և անտեղի. որովհետեւ ինչպէս Գրիգորիկի, Թարգմանիկի, Գագիկի, Արքայակ, Վաչագ, Կակ, այսպէս ևս Հայկակ չէր կրնար կոչուիլ, և զիսովին օտար պիտի դարականջի, եթէ նոյն իսկ Հայկ անունն ինքն յիշեան նուազական համարինք: Արդ եթէ մեր լսելիքն հիմայ չեն կրնար տանիլ այսպիսի օտարախորթ հնչմանց, որ դեռ աշակերտ ենք համեմատութեամբ Նախնեանց, ինչպէս կարելի է ուրեմն ընծայել զայն մեր ոսկեղաբութարգմանչաց, որոնք եղան կազմակերպող մեր լեզուին, և ասոր հակառակ մեզ քերականական կանոններ աւանդեցին:

Իսկ եթէ ընդ հակառակն ըսելու ըլլանք թէ Հայ և Հայաստան անուանքն՝ Հայկ անունով նահապետի մը արմատականէն յառաջ կու գան, ասոր ոչ միայն վերը բերած վկայութեանց հեղինակներն, ոչ միայն ամբողջական Հայոքիւնն, այլ նոյն իսկ ամենայն ազգաց և ժանօթ աշխարհաց անուանց փորձն կը վկայէ, և ամէն տարակոյս և անտեղութիւնք կը վերնան:

Յիրաւի, կը տեսնենք հին ազգաց ազգաբանութեան պատմութեան մէջ, ինչպէս նաև Եննդոց Գրոց, որ դրեթէ ընդհանուր առմամբ ամէնքն ևս ունեցեր են անստոյգ ժամանակաւ իրենց վկայաստանական և առասպելական զիւցազուներն, և թէ այս ազգերն գողցես մինչև ցարդ կը կրեն իրենց ազգութեան և աշխարհաց վրայ՝ մէկ մէկ յատուկ անուանք. օրինակ իմն, Ասորեստան, Մարաստան, Եգիպտոսիք, և այլն. սակայն անոնց և ոչ մէկուն՝ ոչ ազգի և ոչ ալ աշխարհին անուան համար կրնայ ըսուիլ՝ թէ այն առասպելայօք և անէակ զիւցազին անունէն ծագած է. այլ իւրաքանչիւրն յատուկ և իրական նահապետէ մը, եթէ այն ազգաց և ժողովրդոց աւանդութիւնքն ճշմարիտ են. ինչպէս օրինակի համար, Ասորեստանիք՝ յԱսուրայ, Մարք և Մարաստան՝ ի Մաղայ, Յուդայաստան ի Յուդայէ, և կամ յանուն Եբերայ՝ Եբրայեցիք, Յոյնք ի Յուանայ, և այլն: Ուրեմն ասկէ իսկ կը հետևի թէ Հայաստան՝ ի Հայկ անուամբ նահապետէ մը յառաջ եկած է: Վասն զի ի բաց թողլով անոր վերջին մասնիկը՝ ստան, որ հին պարսկերէն կամ քանդակ բառ է, և յոյզ կը նշանակէ, և ա զիրը՝ որ միացուցիչ է անոնց, կ'ուսենանք Հայկայ արմատականն Հայ, որուն յսփնակին՝ է Հայք:

Բաց ի մարիբասեան կամ քաղդէական մատենէն և Հայոց ընդհանուր կենդանի աւանդութիւններէն կը գտնուին հետք նմանահնչիւն անուանց

նաև ի սեպածի արձանագրութիւնս սեմական և քամական ազգաց, որոնք նոյն իսկ իրենց աշխարհադրական դրիւք և ցեղական ծագմամբն ևս կը մատենան Հայոց: Բանասէրք Ալտ-հայի կամ Ալտ-հայի անուամբ Յարեթական ցեղէ ժողովուրդ մը կը յիշեն Ալտ լճին եզերքն և Ուրալ լեւանց հովտին մէջ, որոնք յանյիշատակ ժամանակաց ի վեր՝ շատ նշանաւոր եղան մետաղագործութեան մէջ: Եւ Լընորման հին աւանդութեան մը վրայ հաստատուած կը յաւելու թէ ցեղն զեռ Ալլուայի (այսպէս կը կոչուի հիւսիսային լեռնոտ աշխարհ մը յանուն ժողովրդեան) մէջ չորուած՝ հարաւային կողմեր կը բնակէին, և անոյ արիական և սեմական ցեղերէ մշուած հոն գաղթեցան: Արամէական ազգաց, ըստ այլոց Ասորեստանայց՝ սեպածի արձանագրութեանց մէջ ևս Այկ կամ Այօ ՝ զիւցաղն մը կը յիշուի, զոր ազգային հնասէրն մեր Պ. Հիսարլեան՝ Հոյկին հետ նոյն կը համարի: Սակայն մենք Հայաստանի սեպածիներէն կը յուսանք ընդունել Հայոց նահապետին անունը, որոնք օրէ օր ի յայտ կու գան:

Եթէ հայ ազգն ամենահին ժամանակէ ի վեր զՀայկ իրեն նահապետ ճանցած չըլլար, ոչ միայն խորենացւոյ պէս ծերունոյ մը, այլ և ոչ իսկ Սահակայ և Մեսրոպայ նման մեծամեծ անձանց վկայութեանցն կրնար բնաւ հաւատք ընծայել: Դարձեալ ոչ կարծեցեալ Մար Իբասն, ոչ Մ. Խորենացի, և ոչ այլ ոք կը յանդգնէր այսպիսի յուսահատ փորձ մը փորձելով մեծաւ աշխատութեամբ՝ Հայոց ստոյգ նախահայր մը և պատմութիւն մը յօրինել, նոյն ինքն տարակուսելով թէ արդեօք այն պատմութիւն ընդունելի պիտի ըլլայ, եթէ ընդ հակառակն պիտի մերժուի: Սակայն խորենացին ոչ միայն չի կասկածիր բնաւ, այլ մանաւանդ թէ իբրեւ ուրախալի լուր մը կը

1 Թէպէտ և հաւանականագոյն և աւելի ու-

զիւ ընթերցու մե կ'երեւի Սարգիս կարգաւ զայն:

ծանուցանէ ազգին՝ թէ բայ 'ի յազգային և 'ի ժողովրդական աւանդութեանց, մեր ցանկալի նահապետին աշունն կը դառնուէր նաև Մար իրաւոյ երկասիրութեան մէջ, զոր հանեց քաղդէական մատենէն, ոճով և կարեւոր տեղեկութեամբք հանդերձ:

Դարձեալ, ինչ կը նշանակեն խորե. նացուոյ այս խօսքերն. « Բանդի ասեւն ոմանց անհաւատի մարդոց՝ ըստ յօ. ժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան, 'ի Հայկայ ղթագադիր ազգդ Բագրատունեաց լինել, (որ է ըստ վկայութեան Սեբէոսի, և իրօք իսկ այնպէս կ'երևի, զոր խորենացին պէտք չէր ստգտանել), վասն որոյ ասեմ՝ մի այսպիսեաց յիմար բանից հաւանել, զի 'ի բայ բանից և անոճ իմն յաղագս Հայկայ և նմանեացն (յաջորդացն) կ'սկսողէ »: Այս վկայութիւնն ուրիշ բան չի ցուցնել, բայց եթէ Հայոց հասարակաց հաւանութիւնն՝ որով զՀայկ իրենց նահապետ ճանչցած էին միշտ և կը ճանչնային այն ժամանակ:

Արդարև եթէ Բագրատունեաց ցեղին նկատմամբ իսկ շատերն այս կարծիքը ունէին թէ 'ի Հայկայ ծագած էր, որչափ աւելի ուրեմն Այրարատի և քուր Արմենիոյ բնակչաց և մնացած աւանտհին հայ ցեղերուն համար, որոնց նախարարութեանց և ազգատոհմին վրայ դեռ կը տեսնուին Հայկայ և աշոր յաջորդող նահապետաց անուանքն և յիշատակն: Այս պատմականըն՝ ծայրութիւնն անմխտիկ կ'երևի, և չէ կարելի դիւրաւ եղծանել զայն: — Դարձեալ, մեր Հայ ազգին նախահօրն և անոր յաջորդաց ապագաւորութիւնը՝ խորենացին Մարիբասայ և Արիզհնուսի վկայութեամբք ծանօթացընելուն պէս, ոչ միայն չհաւատակեցան անոր, այլ մանաւանդ թէ անկէ վերջը եթէ խորենացաց ժամանակակիցն և եթէ վերջն եկող մատենագիրք և պատմաբանք առհասարակ գործածեցին՝ առանց տարակուսի, իբրև իր ինչ անձխտելի:

Արարատեան քաղաւորութիւն. — Արմենիա, Արմենի քաղ թորդուցիր. — Հայաստան. — Այս անուանց ծագումն և կիրաւորութիւն. — Զաւազան կործիք արդի քանակիբաց. — Գաղրաւ կանուրիբն 'ի Հայաստան:

Մովսէս խորենացիէն յառաջ եղող մատենագիրք վերոյիշեալ վկայութիւնն անբով զՀայկ մեր ազգին նահապետ ցուցընելէն զատ՝ ուրիշ կէտերով ալ մեզի նոր լոյս կու տան. կ'ուզեմ ըսել Արաւատեան քաղաւորութեան, Տան կամ Որդուց թորդումայ և Հայոց կամ Հայաստանի բառերուն՝ 'ի միասին կիրաւորութեամբն. Ուստի եթէ արտաքին պատմութիւնն ըսած իսկ ըլլար, ասոնք բաւական էին գողցեն՝ ցուցընելու թէ մեր աշխարհն՝ երեք զանազան վերադիր անուններ կրած է իւր վրայ, ըստ զանազան պատճառաց, և թերևս իսկ ժամանակաց. ինչպէս օրինակ իմն՝ Արարատ կամ Արարատեան ւզգ և քաղաւորութիւն, Արմենիա կամ Արմենիք և Հայաստան:

Գնենք մի առ մի զանոնք, որոնք իբրև առանձին պատմութեան և ժամանակաւոր և ազգային յեղափոխութեանց կամ յաջորդութեանց անմիջական հետևող, մէկ մէկ անմահ յիշատակներ կը ներկայանան հիմայ հետախուզի դիմաց, և մեր ազգին և աշխարհի հնութեանն առհաւատեայք են: Իշրև ըսի, վասն զի վերջէն պիտի տեսնուի թէ որչափ որ առանձին նշանակութիւն ունեցող և տարբեր ժամանակի մէջ գործածուած կ'երևին, սակայն եթէ պատմութեան վաւարանին մէջ ուզենք այն հեռաւոր և աղօտ ճառագայթներն ամփոփել, կան պատճառներ՝ ապաւորեցանելու թէ այն երեքն ալ 'ի միասին գործածուած ըլլան՝ աւանահին ժամանակէ 'ի վեր, բայց զանազան ազգաց և լեզուաց մէջ, և այլ և այլ պատճառաւ:

Թողլով ուռ ժամն Արարատ բառին ուսկից ծագումն ունենալն և անոր ըստորդ նշանակութիւնն, այսպիսի ժանօթ

է մեզ թէ պատմական ամենահին ժա-
մանակի և սեմական ցեղերու և անոնց
լեզուաց մէջ կը գտնուի այն, եբրայա-
կան մատենագիրներէն զայն գործա-
ծող կը գտնենք նախ Հնդգամատենին
ժողից (Ծննդոց Ը. 4), որ կ'ըսէ. « Եւ
նառաւ տապանն յեօթներորդում ամ.
սեանն 'ի քսան և եօթն ամադն 'ի լե-
րինս Արարառայ » : Նոյն անունը կը
ժանուցանեն մեզի նաև Գ. Թադաւու-
րութեանց. Երեմ. Եսայ. և Ամովայ
մարգարէութեանց գրքերն : Հրէից մա-
տինագիրներէն դուրս՝ կը գտնեն արդի
հնագիտութեանց պարագող լեզուա-
բանք՝ նոյն իսկ Ասորեստանեայց սեպտա-
ձև արձանագրութեանց մէջ, բայց քիչ
մը տարբեր հնչմունքով, օրինակ իմն.
Ուրարդի կամ Արարի, որ նոյն է Արա-
րատայ հետ, զոր Հերոդոտոս դեռ ա-
ւելի այլափոխելով և յ զիրն յի տեղ
գործածելով Ալարատ կ'անուանէ :

Սակայն արդեօք Արարատեան եր-
կիրն և թագաւորութիւնն բուն Հայազ-
գին կամ որդւոց Թորգոմայ թագաւո-
րութիւնն եղած է միշտ նախապատմա-
կան ժամանակէ 'ի վեր, եթէ ուրիշ ազ-
գեր ևս բնակած էին այն աշխարհը նախ
նաբար. — Հայք երբ արդեօք և քանի
անգամ գաղթական եկած են հոն. —
Շարունակ ունեցած են և պահեցին ի-
րենց սեփական հայերէնը կամ արա-
րատեան ըսուած լեզուն և իրենց ազ-
գութիւնը :

Այս կէտերս ըստ մարիբաւսեան պատ-
մութեան կամ Մ. Խորենացու՝ յայտնի
են փոքր 'ի շատէ. բայց արտաքին մա-
տենագիրք և բանասէրք՝ իրարու շատ
անհամաձայն կարծիք ունին՝ Հերոդո-
տոս (Ա. 171) զփոխադասի և զԱր-
մէնս (Հայս) մի և նոյն ցեղ կը համա-
րի. թերևս վասն նմանութեան բար-
բառոյ, զոր Դիոնեսիոս Ալիկառնացին
իսկ կը հաստատէ ըսելով, թէ « համա-
լեզու էին » : Լընորման արևելագէտն
ևս՝ Դաուլինսընի հետ (Սոսեռն. Հն.
Բ. Կ. էջ 361) կը հետևի այս սխալ
կարծեաց, և իւր բազմահմուտ գիտու-
թեամբ հանդերձ՝ Հերոդոտոսի և Բու-

նաց պատմագիրներուն դժած պարու-
նակին մէջ կը փակուի, որոնք Բոյն ժո-
ղովրդեան, և այլ ընդ այլոյ աւանդու-
թեան մը վրայ հաստատուած՝ այն-
պէս կ'ըսեն, եւ ընդհակառակն կըր-
կին և տարբեր գաղթականութիւններ
եկած կը համարի յԱրմենիա այլ և այլ
ժամանակ, յորոց զառաջինը՝ Հայկայ
հետ 'ի Բաբելոն բնակող հին ֆուչեան-
ներու ցեղէ մը կը համարի. և այս ցեղէն
մնացած են, կ'ըսէ, արմենական ը-
սուած վանայ սեպաձև արձանագրու-
թիւնքն. իսկ երկրորդ գաղթականու-
թիւնն՝ արմենական կը կոչէ՝ յանուն
Արմենակայ, զոր պորգապէս ազգային
անուանակոչութեան անձնաւորութիւն
մը կը համարի, և ոչ մասնաւոր անձն
մի, ըսելով. « Այս երկրորդ արմենական
գաղթականութիւնն, զոր ազգային ա-
ւանդութիւնն անձնաւորած է յԱրմե-
նակ՝ իբրև ազգական Հայկայ, նշանա-
ւոր է քան զառաջին » :

Ձանց ընելով ուրիշ արևելագիտաց
'ի սեպաձև արձանագրութեանց հանած
և իբրև անունը անմիջական կամ միջան-
կեալ հետեանք՝ Հայաստանի ժողովրդ-
դեան մասին ըրած տեսութիւնքը, ո-
րոնք դեռ պարզ ենթադրութիւններ
են և ամենեւին յօգուտ իրենց՝ պատ-
մական հիմմը չունին, քանի որ դեռ
անոր ճիշդ և իսկական ընթերցումը չեն
հաստատած, կ'ըսենք թէ շատ հաւա-
նական է՝ որ Բաբելոնի խառնակութե-
նէն վերջը կամ յառաջ իսկ, նախ քան
զՀայկական և Արմենական գաղթակա-
նութիւնո՝ ուրիշ փոքր գաղթականու-
թիւնք եկած ըլլան 'ի հովիտն Երաս-
խայ և 'ի փոքրն Ասիա, ինչպէս կը վը-
կայէ նաև Խորենացի, զոր կանխաւ
տեսանք. և թէ այս վերջիններուս վրայ
առնելու է յոյն մատենագրոց վերոյի-
շեալ կարծիքն. որովհետեւ ըստ Պ.
Լանկլուայի՝ հին մատենագիրք՝ Փոխ-
գացի անուամբ՝ փոքուն Ասիոյ արիա-
կան կամ հնդկերոգական ցեղերը կ'ի-
մանային, և ոչ թէ արևմտեան կամ
բոլոր Հայաստանի կամ անոր կեդրոնը
(Արարատ) բնակող Հայ ժողովուրդը :

Իսկ Ռաուլինսընի՝ զՀայո ծագմամբ
'ի ֆուլգիոյ զաղթած համարին, եթէ
միայն այս պատճառաւ է՝ իբր թէ
Ուրարդւոյ կամ Արարատայ բնակչաց
լեզուն բնաւ ապգահանութիւն չունէր
արդի հայերենի հետ, մենք թէպէտ և
բացէ 'ի բաց չենք ուզեր մերժել, սա-
կայն կը հարցընենք թէ այդ մեծանուն
արեւելագէտն ուսկից դտաւ և ուսաւ
Ուրարդւոյ լեզուն, մինչդեռ անոր ա-
նունն ևեթ կը գտնուի Ասորեստանեայց
արձանագրութեանց մէջ, և ոչ թէ այն-
պիսի լեզու մը: Ո՛րչափ ծանօթութիւն
ունի նա՞ չըսեմ արդի, այլ մեր հին գը-
րաբառին վրայ, և թէ գիտէ արդեօք
այժմեան հայերենի կրած փոփոխու-
թիւնը նախընթաց դարերու մէջ:

Դեննք թէ Ռաուլինսըն յԱսորեստա-
նեայց սեպաձև արձանագրութեանց
հանած պատմութեան կ'ուզէ հետևիլ,
ըստ սրումս՝ մին 'ի թագաւորաց Ուրար-
դւոյ (Պէլիդուրի Ա? 780ին) 'ի Նի-
նուէէն դպիրներ բերել տուաւ, որոնք
Ասորեստանի թագաւորաց փառաւոր
տիրոջները Ուրարդւոյ (Արարատայ)
թագաւորին տալով, և ասով Նինուէի
լեզուն առժամակ մի Ուրարդւոյ գիտ-
նոց լեզուն եղաւ և ոչ թէ ժողովրդ-
դական: Սակայն մի և նոյն արձանա-
գրական պատմութեանն ուշ գնելով կը
սեմենենք՝ որ յետոյ առ իսպուխնաւ,
Պելիդուրիսի որդւոյն սանն, Ասորե-
ստանեայց գիրն փոփոխութեամբ՝ բնիկ
լեզուաւ երկրին գրելու դործածուե-
ցաւ: Որով նախընթացաբար ըրած գը-
ծուարութիւնն և հարցն անյուծանելի
կը մնայ՝ Ուրարդւոյ լեզուի մասին, թէ
ինչպէս կը խօսուէր և կը գրուէր նախ
քան զԳլխառութիւն Նինուէական նշա-
նագրոց: Լընորումն (Առձեռն Հն. Հտ.
Ա. էջ 510) արմինական կոչուած բեւե-
ռագիրները՝ Ասորեստանի բեւեռագիր-
ներէն առնուած կը համարի, ոսկայն
կ'ըսէ, թէ այն երկու բեւեռագրաց մէջ
մեծ տարբերութիւն կայ. վասն զի Ար-
մենական կամ Ուրարդւոյ բեւեռագրոց
մեծ մասն՝ գաղափարաց նշաններ են,
զորս ամէն աղգ (գիտնալով այն նշա-

նայ զորութիւնն) իւր լեզուաւ կրնայ
կարգաւ, ինչպէս արդի արաբական
թուանշաններն, Ուստի եթէ Ռաուլին-
սընի Ուրարդացւոց լեզու կոչածը՝ վա-
նոյ քարաժայռին վրայ եղած արմե-
նակաւ սեպաձևներուն հետ նոյնանիշ
համարելու ըլլանք, այն ժամանակ ան-
գղիացի արեւելագիտին ենթադրութիւ-
նին պարզ ենթադրութիւն կը մնայ և
ոչ աւելի ինչ, վասն զի արեւելագէտը
մինչև հիմայ դեռ չկրցան այն արձա-
նագրութեանց բանալին գտնել՝ անոնց
զանազան կերպ գրութեանց պատճա-
ռաւ, բաց 'ի քանի մը գաղափարա-
կան նշանագիրներէն. այսպէս նաև չը-
գտան դեռ Ասորեստանեայց և Բաբելա-
ցւոց արձանագրութեանց ընթերցումը.
միայն արիական արձանագրութեանց
վրայ գրեթէ ապահով են:

Ուրեմն ի՞նչ այսպէս ըլլալով՝ չէ կա-
րելի դերաւ որոշումներ ընել. և ով
կրնայ բացարձակապէս սխալ թէ վա-
նոյ սեպաձև արձանագրութիւնքն 'ի
Հայոց գրուած չեն, և իբրք Արարա-
սեան հայերենի հետ նոյն չեն, գէթ
անոնց իմաստն և հնչմունքն, թէպէտ և
տարբեր նշանագրովք գրուած ըլլան:
Եւ հաւանական կ'երևի մեզ թէ վեր-
ջապէս հայերէն լեզուի օրինք օր մը
պիտի յաջողին բանասէլք լուծել այն
արմենական ըսուած արձանագրոց խոր
հրդաւոր համադրոյը, զոր ուրիշ սովո-
րական գրութեամբք և օրինքք ցարդ
չկարողայան:

ԳԼՈՒԽ Թ.

Արարատ կամ Ուրարդոս անունն ուստի ծա-
ղիկն. — Արա. — Համաձայնութիւն երբայաւ
կան գրոց՝ ընդ պատմագրութեան Հայաստանի,
և աշխարհագրական հաշտաւորք:

Դառնալով Արարատեան թագաւո-
րութեան կամ աշխարհի մասին և ան-
աչառ քննելով, կան պատմական և
բանաւոր փաստեր, որոնք անտարա-
կոյս յօգուտ Մարիբասեան պատմու-
թեան կ'ապացուցանեն, թէ եբրայե-
ցւոց Արարատն, ըստ Հայոց Այրարատ

ևս գրի, և Ասորեստանեայց Ուրարդին և Հերոդոտի Ալարոսն, բուն Հայոց կամ Թորգ-արմայ որդոց՝ տուն և տեղի բնակութեան եղած ըլլայ նոխա պատմական և դիւցազնական ժամանակէ ՚ի վեր, ինչպէս էր պատմական և ամենայայտնի դարերու մէջ:

Նախ անոր բառական ծագման և նշանակութեան ուշ դնելով՝ պէտք ենք վերոյիշեալ երեք ազգաց մատենագրութեան համեմատ վերլուծել. կ'ուզեմ ըսել՝ ըստ երրորդական աւանգութեան, ըստ քաղղէականին և ըստ Հայոց, և տեսնել թէ ինչ կը նշանակեն և ինչչափ և որպէս կը միաբանին: Արարատ բառն ընդհանուր առմամբ՝ երբայական և ասորի լեզուաց մէջ՝ անէճք, անէճք սաւսումնաւ և կամ լոյս բերացողի կը նշանակէ: Սակայն եթէ վերլուծելու ըլլանք՝ երեք մասն կ'ունենանք, և անոր արմատականն է Ար (Ar) որ լեռ կը նշանակէ՝ ճիշդ նշանակութեամբ, ա՛ (a) միացուցիչ է այն արմատականին ընդ թաւ (rād ou rādha) մասնովան, որ արիական լեզուի աւելի կը վերաբերի քան երրորդականի, և տուտոյ կամ տէր կը նշանակէ. յորմէ յառաջ կու գան թերևս պարսկական այս յատուկ անուանքն Ռատ-սահուն, Ռադամիդդ, և այլն: Ուստի ըստ երրորդականին՝ Արարատն եթէ լեռան կամ անէճք սաւսումնաւ նշանակութեամբ առնելու ըլլանք և եթէ լեռան տեռան, միշտ պատմական հիմ մը ունի: Նախնաբար կրնայ անէճք կամ լեռան սասանման ըսուիլ, որովհետեւ գիտենք թէ անյիշատակ ժամանակէ ՚ի վեր Մասիս հրաբխային և ժաժոտ երկիր մ'եղած է. և երկրորդ՝ լեռան տեռան, զի ինչպէս ամենայն երեւելի լեռ՝ այսպէս ալ Հայոց Այրարատն կամ իբրեւ գործի Նախախնամութեան՝ զարգարն Նոյ հիւրընկալելով, և կամ Արայի անոր վրայ տիրելով՝ կրնար ըսուիլ լեռան տեռան կամ տիրողի:

Իսկ գալով Ասորեստանեայց Ուրարդիին կամ Արարդիին, կ'ըսենք թէ մինչև հիմա արեւելագէտք վատա՛ չըլ-

լալով այն արձանագրութեանց ընթերցման վրայ, դեռ որոշ և լեզուաբանական անգամազնութիւն չըրին այն բառին: Այլ ինչպէս տեսանք՝ ումանք Ուրարդու կարգացին և այլք Արարդի կամ Արարդու. ուստի մենք ուշ դնելով այս վերջին ընթերցման՝ կ'ըսենք, ինչպէս նախնիքացի Ուրարմատականը վերջին բանասէրք՝ Ար կարգացին, այսպէս նաև մի և նոյն կանոնի համաձայն՝ անոր վերջին մասնական ու՝ տառերն կամ նշանագիրքն՝ ա տառի վերածելով՝ եթէ յաջին դէպ ՚ի ձախ կարգացուի՝ կ'ըլլայ ճիշտ երայեցոց Արարատը: Իսկ արդ պիտի ցուցնենք թէ երբայեցոց Արարատը նոյն է Հայոց Այրարատին հետ, վասն զի անոնք ՚ի Հայոց կամ Արեաց աւանգութենէ մ'առած են, ուրեմն եզրակացութիւնն յայտնի կ'ըլլայ:

Իսկ ըստ հայերէն կազմութեան լուծելով զԱրարատ բառն, անոր արմատականն կ'ըլլայ Արա, հայ նահապետի մը յատուկ անուն, և վերջնական մասնիկն թաւ, որ արիական լեզուաց մէջ ինչպէս շատ, պատ այսպէս ալ այս մասնիկն տեղ, բնակութիւն, ալ թաւք և դաշտ կը նշանակէ. որով կ'ունենանք Արայի դաշտ կամ բնակութեան տեղ. այսպէս իմացան վաւ իւրզանդ և խորենացի: Այս մեկնաբանական տեսութիւնն աւելի ևս ճամարտանման կ'ըլլայ, եթէ աչք մը տանք հնոյն Հայաստանի, Պարսկաստանի, Ասորեստանի և Հնդկաստանի, և անոնց դրացի ամէն աշխարհաց և աշխարհագրական գրից վրայ, որոնք ժամանակաւ կրեցին արիական ազգին և լեզուին զօրաւոր ազդեցութիւնը. և կը տեսնենք թէ այս աշխարհաց ամենահին և նուիրական տեղերն այս մասնիկով ձևացած են. օրինակ իմն, Աշտի կամ լաւ ևս՝ Յաշտիշատ, Վաղարշապատ, Արհապատ, Խորասպատ, Հերադ, Ֆերադ կամ փերադ, Եփրատ, Մուրատ, և այլն:

Անշուշտ ամենք պիտի ըսեն այս մեկնութիւնն այնչափ չի զօրեր, վասն զի հայերէն Այրարատ կ'ըսենք. որով

այր (մարդ), և արատ, այրատ, յայրատ (գէշ հայեացք) կը նշանակէ: Սուրայն այս կերպ լուծումն տուողներն կաւորող չեն ուրիշ պատմական նշանակութիւն տալ այդ անուան, եթէ ոչ կաթոնն ճամբրամայ արատաւոր դիտումը դարձնել Արա Գեղեցիկի վրայ. ուրով կ'ըլլայ այր արատայ, արատաւորի. համարելով թէ Հալք միշտ Այրաւրատ կոչած ըլլային Հայաստանի այս կեդրոնական երկիրն կամ հօգր և բարգաւաճ նախարարութիւնը, քան զամենայն նախարարութիւնս Բայց Այրաւրատ՝ փոխանակ Արարատայ՝ քիչ անգամ գործածուած է, և համեմատութեամբ առ նոր մատենագիրս կը գրտնուի, և այն իսկ կամ գրչագրաց սխալմամբ ներս մտած է, կամ գաւառական հնչմամբ. ինչպէս օրինակի համար, այս օրուան օրս Զէյթունցիք ամէն բառի մէջ յղիւր՝ յ գրի կը փոխեն կամ կը հնչեն. և կամ մասնաւոր գիտողութեամբ Արարատ լեռը՝ Այրարատ աշխարհէն թերեւ զանազանելու համար: Վասն զի Ս. Գրոց ¹ թարգմանութեան մէջ միշտ Արարատ կը գրեն. այսպէս և Ագաթանգեղոս (Գլ. ԺԷ) և այլք հնագոյնք: Խորենացին և անոր հետևող ժամանակաց մատենագիրք աւելի Այրարատ կը գրեն: Սակայն թէ այս իսկ ինչպէս ըսինք՝ զրչագրաց և ընդօրինակութեանց սխալ մի է՝ յետագայ երեք դիտողութենէ շատ լաւ կ'իմացուի: Նախ և առաջ, ամականաբար զայն գործածած ժամանակ գրելով շատ անգամ առանց յ տառին կը գրեն, երկրորդ, Խորենացին Ա. Գրոց ԺԵ. ԺԶ. զլիցող մէջ, և փառաստա՝ զԱյրարատն՝ Արայի զայտ կ'անուանեն կամ յանուն Արայի կոչուած էր՝ կ'ըսեն, որ յակառակ կ'ըլլէ Այրարատ բառին վերլուծութեանը, որ ինչպէս ըսուեցաւ Այր և արատ բառերու շարկապումն պէտք էր ըլլալ, և ոչ թէ Այրա յատուկ անուան և լատ կամ դաշտ բառին: Ուրեմն այս

իսկ կը ցուցնէ թէ Խորենացին շատ յառաջ Արարատ՝ կը գործածուէր Արայի զայտ նշանակութեամբ, ինչպէս կ'ընդունին նա, և թէ անկէ վերջը անոր ձեռագիրն ընդօրինակողներն մոռցեր են յ տառն, երրորդ, և ակն յայտնի փաստ մ'ալ է՝ Աստուածաշնչի մէջ Երեմիայ մարգարէին Բաբելոնի վրայ հրաւիրած Արարատեան թագաւորութիւնը, զոր Ս. Սահակ և Մեսրոպ Նոյնպէս Արարատայ թագաւորութիւն պահած են. բայց այժմ Խորենացու երկասիրութեան մէջ (Ա. ԻԲ) Արարատեան փոխուած կը գտնենք զայն:

Այս մեկնութիւնն որչափ որ հաւանական կ'երևի բառական վերլուծութեան կողմանէ, նոյնչափ ևս կարելի է ըսել արդեօք ժամանակագրական և պատմական գործածութեան և հնութեան կողմանէ: Ոչ, կը պատասխանենք, նկատելով Արարատ բառը իբրև եբրայական լեզուի տարր մի: Արայն մեր գեղեցիկ՝ էր յաշորդ Արամայ. իսկ Արամ՝ եթէ նոյն է ընդ առաջին թագաւորին Ալարոտեանց կամ Արարատայ, որուն անունն Նեբրովթայ կոթողին վրայ գրուած կը կարդան բանասէրք, Քրիստոսէ յառաջ թ դարուն մէջ կ'ապրէր, եթէ հաւատք ընծայելու ըլլանք արդի բանագիտաց ընթերցման, լռեցընելով առ ժամ մեր պատմութիւնը: Իսկ ընդ հակառակն Հնդամատենին հեղինակն, որ վեց դար կ'անուի է քան զայն՝ գործածած է այն բառը. ուրեմն անկարելի է որ Արարատ լեռը կամ աշխարհը Արայէն մնացած ըլլայ, թէպէտ և 12 դար յառաջ ևս համարելու ըլլանք զԱրայն, ըստ մարիբասեան պատմութեան:

Սակայն եթէ նկատելու ըլլանք իբրև քաղղէական աւանդութիւն ինչ և կամ արիական լեզուի բառ, այն ժամանակ քաջ կը միաբանի մարիբասեան հեղինակին աւանդածին հետ, և իրաւունք կ'ունենան Խորենացին և այլք, որք փոխանակ Արարատայ՝ Այրարատ գրեցին, որ աւելի մօտ է զանգիկերէնի Արեւարաքա (Aryāratha) բառին հետ:

¹ Տէս Ծննդ. Ը. 4. Եայ. 1Է. 38. Երկ. Թագաւոր. ԺԺ. 37. Երեմ. ԾԱ. 27.

Պ. Օպրի ցըրույ՝ թէ այն լեռն՝ զոր արիական ցեղերն յանյիշատակ ժամանակէ 'ի վեր սրբազան խանձարուրք կը համարէին մարգկութեան՝ Արիա-րաքա կամ Այրարատ կը կոչուէր. և կը կարծէին թէ անոր գագաթը կը պտտէր պրահական եօթը Մահար-շիներուն (Maharschis), Պարսից եօթը Ամէշա — Սքենդսներուն (Amescha-Cpentas), և քաղղէական եօթը խաղ-խաւսիներուն (Kakkabi), այս ինքն՝ Մեծ Արջին եօթնաստեղեան կառքը:

Արդիարեւելագէտք՝ Զորապղրիըն-ծայուած Զենա Սեհագաւ գրող համա-ձայն կ'ըսեն, թէ Այրեանա-վէճայի մէջ կար 'ի հնումն Հարա-Պերեզայի (Hara-Berezaiti) սրբազան լեռն, հիւսիսային և ցրտասարսուռ երկիր մը, ուսկից յետոյ Պարսից ցեղը խա-ղաց իջաւ դէպ 'ի Սոգտիան կամ յԱտրպատական, և այժմ՝ Պարսիկք Բո-լոր կամ Բլոր (Polor ou Belourtagh) լեռ կը կոչեն:

Լընորման (Հին. ազգ. պատմութիւն էջ 105) կը յաւելու՝ թէ այս աւանդու-թիւնս Ատրեստանեայց իսկ ծանօթ էր Գրիստոսի թուականէն առաջ՝ Թ. դա-րուն մէջ, իւր պարսկական հնչումով Արա կամ. Հարա-Բարիադ (Barjat). միայն թէ առաջին բառին ր գիրը լի փոխուած էր Հարա-Բարիադ:

Արդ համարելով թէ Արեան՝ Արիա-րաքա և Ատրեստանեայց՝ Հարա-Բա-րիադ կոչած լեռն՝ նախադադարփար ըլ-լայ Արմենիոյ մէջ եղած Արարատայ, այս յայտնի է թէ անոր առաջին գոր-ծածողներն եղան սեմական ազգերն, և անոնցմէ անցաւ արիական ցեղերու և ազգաբնակութեանց մէջ, իսկ արիա-կան ցեղերն, գուցէ և Հայք յետոյ գա-լով 'ի Հայաստան՝ սեփականեցին զոյն Ուրարդուոյ մէջ եղած երկնարբոճ լե-րան, որ կանխաւ Ազատ Մասիք կամ Մասիս-սար կը կոչուէր՝ 'ի Հայոց ա-

ռաջնորար անգր գաղթողաց. և ըստ սեպաձև արձանագրութեանց Մուսա-սիր կամ Մասա-սարի, և այն սարն ալ 'նուիրեցին Արայի և Քաջաց նորա: Հաւանօրէն՝ Արտաշեսի որդւոյն Արտա-ւազդոյ համար երգուած երգերն և զը-րոյցքն ևս զոյս կ'աղնարկեն: Ուրեմն Հնդամատներն Արարադն որչափ որ ա-մենահին կ'երիի մեզ, և անոր մեկնա-բանական նշանակութիւնն թէպէտ և այնչափ համաձայն չէ մարիբաւեան մեկնութեան, սակայն մեզ աւելի հա-ւանական կ'երեի թէ Արմենիոյ մէջ ե-ղած ազատ Մասեաց կը տրուէր՝ 'ի նախապատմական ժամանակի հայա-զարմից:

Անհիմն է Լընորմանի այն ենթադրու-թիւնն թէ Հնդկաստանի լեռանց կը տրուէր Արարատ անունը, և թէ մարգ-կութեան խանձարուրքն հոն եղաւ և տապանն՝ յետ ջրհեղեղին: Նախ, վասն զի յետ Մովսիսի՝ Ամովս մարգարէն և այլք՝ Արմենիոյ լեռանց կու տան Արա-րատ անունը, զորս քիչ յետոյ պիտի տեսնենք: Եւ երկրորդ, եբրայական գրոց՝ Արարատեան թագաւորութեան կամ երկրին վրայ ըրած նկարագրու-թիւնքն թէ աշխարհագրական առ-մամբ, և թէ ցեղական բնակութեամբ, և թէ պատմական աւանդութեամբ՝ թորգոմեան որդւոյ և տանը քաջ կը պատշաճին: Վասն զի սկսեալ յԵբ-րայեցւոյ՝ բոլոր եկեղեցական և հեթա-նոս մատենագիրք հոն Հայաստանի Ա-րարատ գաւառը կը դնեն. իբրև ամե-նաբարձր և լեռնային երկիր՝ հոն կ'ի-ջեցընեն Նոյայ տապանն. հոն ապաւի-նել կու տան Սենեքերիմոյ հայրասպան որդւոյ: Եւ Երեմիա (ՄԱ. 27) Արարա-տայ թագաւորութիւնն Բաբելոնի վրոյ կոչած ասոն՝ այնպիսի պարագաներ կը յիշէ, որոնք՝ եթէ լաւ ուշ գնենք հայ-կական աւանդութեանց մասին՝ տարա-կոյսնիս կրնան փարատել. և հոյսեցէր 'ի

1 Ritter, Erdkunde Asien, t. VIII. 1^{re} partie p. 29-31, 50-69. — Haug, der erste Kapitel der Vendidad. — Kipert, dans le Bulletin de l'A-

cadémie de Berlin, décembre 1856. — Obry, Du berceau de l'espèce humaine. p. 61 et suiv. — Spiegel, Avesta. t. I Ants. p. 4 et suiv.

վերայ նորա զթագաւորութիւնս Արարատայ » (Միննայ և Արարատայ ըստ երայական բնագրին) : Որովհետև ըստ Սէն Մարգէն և Լընորման արեւելագիտաց վկայութեան՝ այդ վերայիցեալ Արարատայ կամ Արմենիոյ սահմանակից փոքրիկ թագաւորութիւններն ուրիշ բան չէին, բայց եթէ Մարիբասեան կամ Մ. Խորենացոյ պատմութեան մէջ եղած Արմենակայ եղբարց Մանաւազեան և Արարատեան նախարարութիւնքն, որոնց անուանքն կը պահուին ցարդ Հայաստանի այն գաւառաց վրայ : Եւ Հրէից գրոց մէջ ամենահին ժամանակէ 'ի վեր դործածուածն տուն թոր, գոմայ, որ նոյն է ընդ Արարատայ թագաւորութեան, ոչ միայն Ագաթանգեղոս, Բուզանդ և Կորիւն, այլ և Եւսեբիոս և ամենայն հին և նոր մեկնիչք զըրոց և բանասէրք՝ զՀայոս կամ զԱրմենիա կը հասկընան, և հոն կը հաստատեն թորգոմ՝ նահապետին բնակութիւնը. հակառակ սակաւուց ոմանց, որ զթիւրքմէնները կարծեցին, որոց Հայաստանի մէջ բնակութիւն հաստատելու ժամանակն քաջածանօթ է 'ի պատմութենէ, և կ'իմացուի թէ որ կողմերէն եկան հոն, և չէ կարելի չփոթել զանոնք Հայոց հետ, ինչպէս ըրին անհմտութեամբ վիլըֆորուս և Պ. Ջրպետ : Եղեկիելի մարգարէութեան (իւ. 14), որ 600 տարի քրիստոսէ յառաջ է, թորգոմայ տանը վրայ ըրած այս նկարագրին համաձայն, թէ « Ի տանէ թոր, գոմայ ձիովք և հեծելովք և լորւովք լցցեն զվաճառս քո », կ'աւանդեն նաև Հերոդոտոս մէկ դար վերջը, և Բսե. Նոփոն 446 ին, և Ստրաբոն և Պլինիոս՝ մեր Հայ ժողովրդեան կամ թորգոմացոց մասին : Աւերբոգ է զանոնք հոս խըճողել, այլ ուղղին կը ցուցնենք Ատ.

տիկեցի Մեղուին Արշաւաճ Կիւրուի և Նախանջ Խիւրուի Յունաց (Ի. Դպր. Գլ. Ա-Ձ) : Հոն կը գտնէ արդարեւ այն ամէն ստացուածովք լցեալ ժողովուրդը՝ զՀայոս կ'ուզեմ ըսել, ուր գտաւ յոյն զօրապետն իւր ամէն պիտոյքն, և զարմացաւ Արմենիոյ ժողովրդեան անգէորգութեան ոսկի դարուն վրայ :

Ոչ միայն տոհմային՝ այլ և արտաքին պատմագրութիւնք կը ցուցնեն՝ թէ Պարսից Աքիմենեան թագաւորաց 'ի վերոյ եղեկիելի նկարագրած ընտիր ձիերն ու լորներն՝ Արմենիոյ կամ Հայաստանի առանձին սատրապի մը խըճամոց ներքե կը դարմանուէին, և ամ յամէ 20,000 մտրուկ երիվար կը զըրկուէին թագաւորին՝ 'ի պաշտօն Միհրաստուածոյն. և անշուշտ այս պատճառ է՝ որ առանձին արտօնութիւն ունէր Հայոց սատրապն՝ ձի հեծցընելու զթագաւորը, և թէ այն կողմերու հայ ժողովրդեան մէկ մասն յետոյ Մշեցիք կամ Մշակք կոչուեցան :

Նոյն իսկ Սարաբոն (Ե. Գլ. ԺԴ) այսպէս կը խօսի. « Այնպէս ձիարոյծ է երկիրն (Արմենիա), զի և Նեսիսն Երիվարքն անդ սնանին՝ որովք վարին թագաւորը Պարսից », և թէ Արտաւազդ « բաց յայլմէ հեծելազօրուէն՝ եցոյց Անտոնիոսի 6000 երիվարաց զըրահազգեստից, յորժամ առպատակ դնէր ընդ նմա յերկիրն Մարաց » :

Այսպէս ուրեմն արտաքին պատմագրութիւնն՝ ինչպէս ուրիշ շատ կէտերու մէջ՝ այսպէս այս մասին ևս՝ զարմանալի համաձայնութիւն մը կը կազմէ մեր հայ Հերոդոտոսին պատմագրութեան և Հրէից գրոց վկայութեանց հետ, զոր ուղղագատ միտք մը կարող է ուրանալ :

Կը շարունակուի :

Հ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳՍԵԱՆ

